Կարծիք

Վահագն Ավետիսի Հարությունյանի՝ «Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը 1902-1921թթ. ազգային-քաղաքական գործընթացների համատեքստում» Թ.00.05 - «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հայոց պատմության անբաժանելի մասն է հանդիսանում Հայ եկեղեցու պատմությունը, որի համակողմանի և համապարփակ ուսումնասիրումն արդի հայաստանյան պատմագիտության կարևոր հիմնախնդիրներից է: Հայ եկեղեցու պատմության տարաբնույթ հիմնահարցերի հետազոտումն ամբողջացնում և նոր տեսանկյունից է ներկայացնում մեր ժողովրդի պատմության հայտնի, իսկ երբեմն էլ քիչ հայտնի իրադարձություններն ու դեպքերը: Այս համատեքստում խիստ կարևորվում է Հայ եկեղեցու նվիրապետական աթոռների պատմության գիտական ուսումնասիրումը: Հայտնի է, որ պատմական ճակատագրի բերումով դեռևս 5-րդ դարի 80-ական թ.-ից հայոց եկեղեցին լքել է իր պատմական նստավայրը՝ Սուրբ Էջմիածինը և շուրջ հազար տարի հանգրվանել զանազան այլ վայրերում՝ հասնելով մինչև Կիլիկիա:

Կաթողիկոսական աթոռի այս դեգերումներն անհետևանք չեն մնացել: Հայաստանեայց առաքելական եկեղեցու նվիրապետական համակարգում առաջացել է նոր կաթողիկոսական աթոռ՝ Կիլիկիո կաթողիկոսությունը: Կիլիկիո աթոռը սկսելով իր պատմական ուղին՝ սկսած 15-րդ դարի 40-ական թթ. կարևոր դերակատարում է ունեցել հայության մի կարևոր հատվածի՝ կիլիկիահայության կյանքում, իսկ 1921 թ. Կիլիկիայից տարագրվելուց հետո վճռորոշ դեր է խաղացել նաև ցեղասպանությունը վերապրած և սփյուռքացման գորընթացների մեջ հայտնված հայության ցրյալ հատվածի նոր պայմաններում հաստատվելու և ազգային նկարագիրը պահպանելու գործում: Զարմանալիորեն հայաստանյան պատմագիտությունը խիստ նվազ չափով է գիտական հետազոտության ենթարկել Կիլիկիո պատմության հարցերը՝ ի մասնավորի

գիտականորեն գրեթե լուսաբանված չէ վերջինիս գործունեությունը 20-րդ դարում: Առկա հետազոտությունները հիմնականում կատարվել են սփյուռքում, որոնց մեծ մասն էլ իրականացվել են հենց Կիլիկիո կաթողիկոսության պատվերով ու ջանքերով: Առանձին դեպքերում այդ աշխատությունների մեծ մասն ավելի շատ ունեն աղբյուրագիտական նշանակություն:

Կիլիկիո կաթողիկոսության պատմության թերևս ամենաքիչ ուսումնասիրված շրջափուլերից է հանդիսանում 20-րդ դարի առաջին երկու տասնամյակների բախտորոշ ժամանակաշրջանը, որի կարևորագույն հիմնախնդիրների պատմաքննական հետազոտությանն է նվիրված Վահագն Հարությունյանի սույն ատենախոսությունը: Կարևոր ենք համարում ընդգծել, որ հեղինակը Կիլիկիո կաթողիկոսության պատմության անցքերը հիրավի ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանի ազգային-քաղաքական կյանքի համատեքստում՝ փորձելով կաթողիկոսական աթոռի պատմությունը շաղախել ազգային պատմության հորձանքին՝ որպես դրա մի կարևոր բաղադրիչ:

Անդրադառնալով ատենախոսությանը՝ նշենք, որ աշխատանքի անառարկելիորեն ուժեղ կողմերից և առավելություններից է հանդիսանում աղբյուրագիտական հարուստ հենքը: Հեղինակն աշխատանքը շարադրել է արխիվային հարուստ նյութերի ուսումնասիրմամբ, որոնց թվում տեղ են գտել Հայաստանի ազգային արխիվի, Փարիզի Նուբարյան գրադարանի արխիվի, Ե. Չարենցի անվան ԳԱԹ-ի արխիվի, Մատենադարանի, Կահիրեի ազգային առաջնորդարանի արխիվի, Մոսկվայի Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության արխիվի վավերագրերը: Ատենախոսության մեջ տեղ են գտել նաև առանցքային նշանակություն ունեցող արխիվային փաստաթղթերի բազմաթիվ ժողովածուներ, ժամանակի պարբերական մամուլի նյութեր, ինչպես նաև թեմային առնչվող մեծ քանակությամբ մենագրություններ, գիտական հրապարակումներ և համացանցային նյութեր:

Ատենախոսության աչքի զարնող առավելություններից են աշխատանքի վերջում ներկայացված թվով 7 հավելվածներն ու տարբեր աղյուսակները: Հեղինակը բծախնդիր հետազոտողի աշխատասիրությամբ հավելվածներում կազմել և ներկայացրել է Կիլիկիո

կաթողիկոսների, կաթողիկոսության միաբանների, թեմերի, կալվածքների, նահատակված հոգևորականների և մի շարք այլ հարցերին վերաբերյալ համակարգված տեղեկատվություն: Հավելվածներում կատրվել են նաև բազմաթիվ պատմագիտական և փաստական ճշգրտումներ:

Հեղինակը աշխատանքը շարադրելիս ցուցաբերել է գիտական աշխատանք կատարելու բարձր ունակություններ, փաստերը ներկայացրել է քննադատաբար, դրանք ենթարկել վերլուծությունների, կատարել համադրություններ և բխեցրել սեփական եզրահանգումները:

Ատենախոսությունը բաղկացած է երեք գլուխներից, նախաբանից և եզրակացություններից: Շահեկանորեն առանձնանում է նաև ատենախոսության կառուցվածը: Աշխատանքի երեք գլուխները և համապատասխան ենթագլուխները իրենց հերթին՝ ըստ ներկայացված հիմնահարցերի, բաժանված են առանձին ենթաբաժինների:

Ատենախուսության առաջին գլուխը նվիրված է Սահակ Բ Խապայանի կաթողիկոսության առաջին շրջանին՝ 1902-1914 թթ. գործունեությանը: Մեր կարծիքով հատկապես հաջողված կարելի է համարել ատենախոսության երկրորդ գլուխը: Այստեղ հեղինակն անդրադառնալով Առաջին աշխարհամարտի տարիներին հայության համար ստեղծված օրհասական վիճակին՝ հասուն եկեղեցաբան-պատմագետի խորաթափանցությամբ վերլուծում է այդ տարիներին թուրքական իշխանությունների կողմից արհեստականորեն ստեղծված Օսմանյան կայսրության հայոց հոգևոր առաջնորդի՝ «կաթողիկոս-պատրիարքի» գործունեությունն ու համապատասխան կանոնագիրը: Հեղինակը չի վարանում օբյեկտիվ գնահատականներ հնչեցնել Սահակ Բ-ի այս շրջանի գործունեության վերաբեյալ՝ քննադատելով այն և իրավացիորեն վերջինիս գործունեության երուսաղեմյան շրջանն համարելով «անփառունակ» (էջ 140): Սահակ Բ-ի գործունեությունը հեղինակի կողմից քննադատության է արժանանում նաև այլ դրվագներում (էջ 112-114 և այլ): Հիրավի չի կարելի չհամաձայնվել նաև ատենախոսի թուրքական իշխանությունների հեղինակած արհեստածին «Կանոնագիր հայոց կաթողիկոսության և պատրիարքության» փաստաթղթին տված գնահատականի

հետ, երբ վերջինս այն համարում է «ցեղասպանության քաղաքականությունից փրկված արևմտահայերի նկատմամբ երիտթուրքերի նոր քաղաքականության անմիջական դրսևորում» (էջ 128) : Այս գլխում ատենախոսը նոր լույսի ներքո է ներկայացնում նաև Կիլիկիո կաթողիկոսության դրական դերակատարումը՝ ցեղասպանության տարիներին կիլիկիահայության շրջանում համեմատաբար քիչ զոհեր ունենալու տեսանկյունից:

Իր առանձնահատկությամբ աչքի է ընկնում նաև ատենախոսության վերջին՝ երրորդ գլուխը: Այստեղ ատենախոսն առատ աղբյուրագիտական նյութի օգնությամբ ներկայացրել է Կիլիկիո կաթողիկոսության կիլիկյան շրջանի գործունեության վերջին շրջափուլը՝ ցույց տալով Կիլիկիո աթոռի հսկա դերակատարումը պատերազմի ավարտից հետո կիլիկիահայության հայրենիք վերադառնալու և ազգային հոգևոր կյանքի վերակազմակերպման գործընթացում: Աշխատանքի վերջին ենթագլուխը նվիրված է Սահակ Բ-ի 1920թ. Եվրոպա կատարած ուղևորությանը: Այն թերևս այդ իրադարձությանը և դրա հետևանքներին նվիրված գիտական առաջին անդրադարձն է հայաստանյան պատմագիտության մեջ:

Ներկայացնենք որոշ առաջարկություններ և նկատառումներ.

- Նախ կարծում ենք, աշխատանքը կշահեր, եթե հեղինակն առանձին գլխով անդրադառնար Կիլիկիո կաթողիկոսության հարաբերություններին Մայր Աթոռի և հայոց եկեղեցու մյուս նվիրապետական աթոռների հետ: Ճիշտ է ատենախոսն այս հարաբերություններին անդրադառնում է ատենախոսության տարբեր դրվագներում (օրինակ էջ 49-50 և այլն), սակայն առանձին անդրադարձը կընդգծեր այդ հիմնախնդրի կարևորությունը:
- Հաշվի առնելով Կիլիկիո կաթողիկոսության գործունեության խնդրո առարկա ժամանակաշրջանի առանձնահատկությունները՝ կևևոր էր նաև անդրադառնալ վերջինիս հարաբերություններին հայ հարանվանական մյուս ուղղությունների՝ հայ կաթոլիկների և հայ բողոքականների հետ:
- Աշխատանքում գրեթե անդրադարձ չկա հայ ազգային կուսակցությունների դիրքորոշմանը Կիլիկիո կաթողիկոսության հանդեպ, խոսքը հատկապես գնում է

Առաջին համաշխարհային տարիներին «կաթողիկոս-պատրիարքության» խնդրահարույց շրջանի և առհասարակ կաթողիկոսության կարգավիճակի և առհասարակ հայության կյանքում ունեցած դերակատարման մասով: Այս տեսակետների ընդհանրացումը խիստ հետաքրքրական կլիներ հատկապես այն առումով, որ Կիլիկիո կաթողիկոսության տարագրությունից հետո վերջինիս հարաբերությունները ազգային կուսակցությունների հետ ձեռք բերեցին բավականին ինքնատիպ առանձնահատկություններ:

- Քանի որ աշխատանքը ժամանակագրական առումով ընդգրկում է մինչև 1921թ., կարծում ենք ավելի շահեկան կլիներ, եթե ատենախոսը ավելի մեծ ծավալ հատկացներ նաև հենց այդ թվականին տեղի ունեցած հիմնական իրադարձություններին:
- Թեև աշխատանքն ունի ընդգծված հարուստ աղբյուրագիտական հենք, անխոս այն կշահեր, եթե հնարավորության դեպքում օգտագործվեին նաև Անթիլիասի կաթողիկոսարանում պահվող արխիվային նյութերը:
- Հեղինակը ատենախոսության առաջին հատվածում անդրադառնում է նաև Կիլիկիայի հայ բնակչության թվաքանակի հետ կապված հարցերին: Այս իմաստով աշխատանքը կշահեր, եթե ատենախոսն օգտագործեր նաև Ռ. Թաթոյանի հեղինակած «Կիլիկիահայության թիվը Հայոց ցեղասպանության նախօրյակին», Երևան, 2021, արժեքավոր աշխատությունը:

Ներկայացված առաջարկություններն ու նակատառումներն ամենևին էլ չեն նսեմացնում կատարված և գնահատանքի արժանի ատենախոսության արժեքը: Ամփոփելով, արձանագրենք, որ Վահագն Հարությունյանի՝ «Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը 1902-1921թթ. ազգային-քաղաքական գործընթացների համատեքստում» խորագիրը կրող սույն ատենախոսությունը հայաստանյան պատմագիտության մեջ, ըստ էության, Կիլիկիո կաթողիկոսության 20-րդ դարի առաջին երկու տասնամյակների պատմության և աթոռի գործունեության գիտական ուսումնասիրության առաջին փորձն է, որը հեղինակը կատարել է հաջողությամբ:

Լինելով հիմնախնդրի հայաստանյան իրականության մեջ առաջին հետազոտողներից մեկը՝ հեղինակին հաջողվել է հաղթահարել իր առջև դրած խնդիրները և ներկայացնել համակարգված հետաքրքիր մի հետազոտություն, որը պարունակում է գիտական նորույթ և անխոս իր ներդրումը կբերի հայրենի պատմագիտության և եկեղեցագիտության զարգացման գործում:

Ելնելով, վերը նշվածից, կարծում ենք, որ Վահագն Հարությունյանի՝ «Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը 1902-1921թթ. ազգային-քաղաքական գործընթացների համատեքստում» խորագրով թեկնածուական ատենախոսությունն ամբողջությամբ համապատասխանում է ներկայացվող պահանջներին, ուստի հաշվի առնելով կատարված բարեխիղճ աշխատանքը միջնորդում ենք պատմական գիտությունների գիտական աստիճաններ շնորհող «Կրոնի տեսություն և պատմություն» մասնագիտական խորհրդին Վահագն Ավետիսի Հարությունյանին շնորհել իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, որին նա լիովին արժանի է:

Պաշտոնական ընդդիմախոս՝ **Է.Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու

Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Է. Գ. Հովհաննիսյանի ստորագրությունը հաստատում եմ:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Ուսումնագիտական հարցերի գծով պրոռեկտոր,գիտական քարտուղար՝ **Մ.Մ. ԻՍՊԻՐՅԱՆ**

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ

20. 05. 2022թ.